Հարց

Ո՞վ է պատասխանատվություն կրում էլեկտրաէներգիայի առևտրային հաշվառքի սարքերի ամբողջականության և պահպանման համար:

Պատասխան

Սպառողը պատասխանատվություն է կրում միայն այն առեւտրային հաշվառքի սարքերի ամբողջականության եւ պահպանման համար, որոնք տեղակայված են իր սեփականությունը հանդիսացող կամ իր կողմից տնօրինվող տարածքներում եւ այդ մասին նշված է պայմանագրում: Սպառողի սեփականությունը հանդիսացող, բայց իր սեփական կամ իր կողմից տնօրինվող տարածքներից դուրս տեղադրված հաշվառքի սարքերի ամբողջականության եւ պահպանման համար պատասխանատվությունը կրում է մատակարարը: